Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա գիտական խորհրդի առցանց հանցման թիվ 6 նիստի

ք.Երևան 09 փետրվարի 2024թ.

Ներկա էին ՝ գիտխորհրդի 20 անդամներից 20–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանի 23SC-CNR01D002 ծածկագրով «Սինթետիկ ալֆա-ամինաթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը՝ հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար» վերնագրով թեմայի կատարման տարեկան հաշվետվության հաստատման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:**

Լսեցին ՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ներկայումս

Նազելի Չարչյանի և Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակ են ստանում «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողներ՝ Աննա Արմենի Գասպարյանը և Ռուզաննա Արթուրի Բեկջանյանը: Ա. Դադայանը նշեց, որ Աննա Գասպարյանը (ՄՈԳ>19) և Ռուզաննա Բեկջանյանը (ՄՈԳ>19) 4 կիսամյակ անընդմեջ գերազանցությամբ շարունակում են իրենց ուսումը: Ա. Դադայանը հավելեց նաև, որ Ռ. Բեկջանյանը 2023-2024 ուս. տարում հաղթող է ճանաչվել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթում:

Եղույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Խ. Հակոբյանը, Հ. Սիմոնյանը, Ս. Պետրոսյանը, ովքեր առաջարկեցին շարունակել Աննա Արմենի Գասպարյանի և Ռուզաննա Արթուրի Բեկջանյանի անվանական կրթաթոշակները:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

1. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողուհի Աննա Արմենի Գասպարյանի՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը:
2. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Ռուզաննա Արթուրի Բեկջանյանի՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի:

2. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանի 23SC-CNR01D002 ծածկագրով «Սինթետիկ ալֆա-ամինաթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը՝ հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար» վերնագրով թեմայի կատարման տարեկան հաշվետվության հաստատման հարցը:**

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանին, ով համառոտ ներկայացրեց 23SC-CNR-1D002 ծածկագրով «Սինթետիկ ալֆա-

ամինաթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը՝ հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար» վերնագրով հայ-իտալական թեմայի կատարման առաջին տարվա հաշվետվությունը: Հ. Սիմոնյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում սինթեզվել են կողմնային շղթայում հետերոցիկլիկ օղակներ պարունակող, 2 նոր α-ամինոթթուներ, որոնք փոխանցվել են Իտալիայի գործընկերներին կենսաբանական որոշ հատկությունների ուսումնասիրման համար: Հաշվետու ժամանակահատվածի երկրորդ եռամսյակում ԵՊՀ է այցելել Իտալիայի գիտական խմբի ղեկավար Ջիովանի Ռովիելոն, ով հանդիպումներ է ունեցել գիտական խմբի անդամների հետ, քննարկվել են հետագա անելիքները: Այցի ընթացքում Ջիովանի Ռովիելոն ՀՀ ԳԱԱ-ում հանդես է եկել նաև զեկույցով, որտեղ ներկայացրել է իր գիտական ուղղությունը և թեմայի շրջանակներում կատարված համատեղ հետազոտական աշխատանքները:

Հ. Սիմոնյանը նշեց, որ թեմայի կատարման երրորդ եռամսյակում իր ղեկավարությամբ երկու կատարողներ Իտալիայի գիտական խմբի ղեկավարի հրավերով գործուղվել են Իտալիայի Նեապոլ քաղաքի «Կենսակառուցվածքների և կենսաիմիջինգի» ինստիտուտ, որի ընթացքում ծանոթացել են Իտալիայի գիտական խմբի անդամներին, մասնակցել են նախագծի շրջանակներում սինթեզված ամինաթթուների ՇԴ սպեկտրոսկոպիական հետազոտություններին: Ստացված դրական արդյունքները հիմք են հանդիսացել հակաուռուցքային հատկությունների ուսումնասիրման նպատակով նմուշները կենսաբանական սկրինինգի լաբորատորիային փոխանցելու և *in vitro* հետազոտությունների համար: Ուսումասիրությունները ընթացքի մեջ են, դրական արդյունքների դեպքում աշխատանքը կներկայացվի տպագրության: Գիտական թեմայի հետազոտական աշխատանքներն իրականացվել են ըստ նախօրոք հաստատված օրացուցային պլանի:

Եզույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Ա. Ծատուրյանը, Ա. Գեոլչանյանը, Տ. Սարգսյանը, ովքեր առաջարկեցին դրական գնահատել հաշվետու

ժամանակահատվածում կատարված աշխատանքները և հաստատել հաշվետվությունը:

Որոշեցին ՝ (միաձայն) հաստատել 23SC-CNR-1D002 ծածկագրով «Սինթետիկ ալֆա-ամինաթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը՝ հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար» վերնագրով հայ-իտալական թեմայի կատարման առաջին տարվա հաշվետվությունը:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝

ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

ք.գ.թ. , դոցենտ Ա. Դաղայան